Ռուբեն Սևակ

Գինով գիշեր

Օդին մեջ խունկ կա, օդին մեջ համբույր,
Օդին մեջ զգվանք, օդին մեջ գաղջ բույր.
Բյո՜ւր, բյուր դիցանույշ կարծես շշնջեր
Չորսդիս, այս գիշեր օդին մեջ ինչե՜ր…:

Ցայգին մեջ թրթռում մը կա անդադրում,
Սիրո պես հըզոր, սիրո պես տրտում,
Հազար աստղ կարծես մեկ-երկու պաչեր
Վերևս, այս գիշեր երկնքին մեջ ինչե՜ր…:

Լիճն արծաթ փրփրով վե՜ր կը սլանա,
Ամեն ալյակե մեկ-մեկ սիրենա
Ինձ կախարդ հրավեր կարծես շշնջեր.-
Այս գիշեր լճիս ծոցին մեջ ինչե՜ր…:

Ա՜խ, տաք սիրտ մ’ըլլար, երկու թաց աչեր,
Գլուխըս սիրո կուրծքին վրա հանգչեր.
Թևերս իր մերթ թևին վրա խաչեր…
Այս գիշեր գինո՜վ սրտիս մեջ ինչե՜ր…: